Հաշվետվություն

«Բնությունը որպես գրականության էություն ու բալասան»:

Համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ որոշման ՀՊՉ պահանջի 7-12-րդ դասարաններում պետք է իրականացվի նախագծային աշխատանք: Նախագիծը իրականացվում է աշակերտի ընտրությամբ, իսկ 1 նախագիծ իրականացնելը աշակերտի կողմից պարտադիր է 1 ուսումնական տարվա ընթացքում:

7-րդ դասարանում «Գրականություն» առարկայից նախագիծ :

7–րդ «Դ» դասարանի աշակերտներ Սոնա Մուրադյանը,Մարիաննա Շմավոնյանը,Մանե Սաղաթելյանը ցանկություն հայտնեցին մասնակացել նախագծային աշխատանքին: Սովորողների համար նախագծային աշխատանքի մասին պատկերացումները այլ էին: Նախ ներկայացվեց,թե ինչ է նախագծային աշխատանքը, ապա սկսվեցին աշխատանքները: Փորձեցինք հարցերի միջոցով, առաջադրանքների առաջադրման միջոցով նրանց բերել թեմայի ընտրության: Ի վերջո սահմանվեց թեման՝ «Բնությունը որպես գրականության էություն ու բալասան»:

Աշակերտները ծանոթացան խնդրին և նպատակներին, մշակեցին քայլաշար,որով պիտի առաջնորդվեին: Սկսեցին տարբեր մրգեր ուսումնասիրել, շրջագայեցին Հայաստանի տարբեր մարզերով, որտեղից ձեռք բերեցին արևահամ մրգերն ու որոշ բուսատեսակներ: Սկսեցին ուսումնասիրել չրեր պատրաստելու եղանակները, ինչպես նաև բուսատեսակների չորացումը: Չորացման աշխատանքը ավարտելուց հետո սկսեցին դրանց կենսաբանական և քիմիական հատկանիշները ուսումնասիրել՝նյութեր պատրաստելով նախագծային աշխատանքի համար:Սկսեցին ուսումնասիրել բուսաբուժությունը և տեղեկություններ հավաքել դրանց օգտակարության մասին:Սկսեցին ուսումնասիրել գրական ստեղծագործությունները, որոնք առնչվում էին թեմային՝հավաքելով մեծ պաշար:Մրգերն ու բույսերը ուսումնասիրեցին նաև երաժշտության ու նկարչության մեջ ՝ և' նյութերը հավաքելով,և' սեփական հմտությունները ցույց տալով.կտորներ ձեռք բերեցին,կարեցին համապատասպան պարկեր,ապա ասեղնագործությամբ և նկարչությամբ դրանք դարձրին

յուրօրինակ և ինքնատիպ։Հարցազրույց անցկացրին հասարակության մեջ՝պարզելու նրանց կապը գրականությանը և բնությանը։ Իրենց ստացած ողջ պաշարի շուրջ պատրաստեցին տեսասահիկ, պաստառ, նկարներ, QR կոդերով հրամցրին նյութը՝ ուսումնասիրելով և պատրաստելով QR կոդեր, SS այլ ծրագրեր, ստեղծեցին տեղեկատվական թերթիկներ, դասարանում իրականացրին քննարկում։ Իրականցվեց նաև միջանկյալ քննարկումներ և աշխատանքների համակարգում։

Ամփոփելով, ի՞նչ տվեց նախագիծը.

Միջառարկայական պատկերացումներ. Այն հնարավորություն տվեց աշակերտներին ուսումնասիրել Հայաստանի արևահամ մրգերն ու օգտակար խոտաբույսերը,խորությամբ ուսումնասիրել դրանց կենսաբանական,քիմիական և բժշկական հատկանիշները,ուսումնասիրել երաժշտական , նկարչական և գրական ստեղծագործությունները,ուսումնասիրել կերպարվեստը,ասեղնագործությունը,կտորի վրա նկարելու նրբությունները,ուսումնասիրել համակարգչային ծրագրեր,ձեռք բերել լրագրողական հմտություններ,վերջապես ՝ ուժ և վստահություն ՝սեփական ձեռքերով ստեղծելու,արարելու

Ի՞նչ հմտություններ և կարողունակություններ են ձեռք բերել .

Գրական ստեղծագործությունների վերհանում,արժևորում։

Աշակերտները ուսումնասիրեցին գրական ստեղծագործությունները,դրանք վերհանեցին նոր տարբերակով՝նպաստելով դրանց հանրաճանաչմանը։

Առարկաների ինտեգրում. Նախագիծը խրախուսեց աշակերտներին ինտեգրել տարբեր առարկաներից ստացած գիտելիքները: Նրանք սովորեցին կապեր ստեղծել կենսաբանության,բնագիտության,քիմիայի,բուսաբուժության,գրականության,արվեստի ու արհեստի,ասեղնագործության,նկարչության ,երաժշտության,լրագրության ,կարուձևի, ՏՀՏ_ի հետ:

Դաշտային աշխատանքի հմտություններ. Շրջելով և հավաքելով մրգերն ու բույսերը՝երեխաների մոտ ձևավորվեց բնության նկատմամբ անխզելի ու ներդաշնակ կապը:Նրանք արժևորեցին բնության դերը մարդու կյանքում:

Տեխնոլոգիական հմտություններ. աշակերտները ուսումնասիրեցին մի շարք ծրագրեր,որոնց շնորհիվ կարողացան տեսասահիկ պատրաստել,ֆիլմ մոնտաժել,հղումներ տեղադրել,QRկոդեր և տեսանյութեր պատրաստել:

Նախագիծը հնարավորություն տվեց նոր չափորոշիչների ներդրման զուգընթաց սովորողների մոտ ձևավորել 21-րդ դարի հմտություններ՝ հետազոտական և համագործակցային, հաղորդակցման :

Նախագծի բարելավման վերաբերյալ առաջարկություններ

Նախագծի հետագա հետաքրքիր զարգացում՝ստեղծել նոր արտադրանք՝խնամքի պարագաներ,եթերայուղեր,օճառ և այլն՝կապելով գրականության հետ,որը հետաքրքիր է դարձնելու և ավելի է ընդլայնելու գրականության նկատմամբ հետաքրքրության շրջանակը:

Ընթացք և Գնահատում /20 միավոր /

1.Թեմայի ընտրություն Հիմնախնդրի ձևակերպում 1միավոր	13.11.23թ.												
2.Քայլաշարի մշակում 1միավոր		20.11.23թ.											
3.Հայաստանի տարբեր վայրերից բույսերի ու մրգերի հավաքում և չորացում 2 միավոր			27.11.23թ										
4.Կենսաբանական հատկանիշների ուսումնասիրում 1միավոր				04.12.23թ									
5.Քիմիական հատկանիշների ուսումնասիրություն Կիրառում բժշկության մեջ ուսումնասիրություն 1միավոր					11.12.23թ.								
6.Գրական ստեղծագործությունների ուսումնասիրում 1միավոր						18.12.23թ.							
7.Երաժշտության և նկարչության մեջ ուսումնասիրություն 1միավոր							08.01.24թ						
8.Հարցազրույց 2միավոր								15.01.24թ					
9.Համակարգչային ծրագրերի ուսումնասիրում 1միավոր									22.01.24				
10.Պարկերի կարում,պատրաստում 2 միավոր										29.01.24			
11.Տեսասահիկի պատրաստում, համակարգում 2միավոր											05.02.24		
12.QR կոդերի և թռուցիկի պատրաստում 2 միավոր												12.02.24.	
13.Դասարանում քննարկում 1միավոր 14.Ներկայացում 2 միավոր													19.02.24

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Բնությունը որպես գրականության էություն և բալասան» նախագծային աշխատանքի ընդունման հանձնաժողով
Համաձայն ուսումնական հաստատության տնօրեն Գ.Մելիք–Ստեփանյանի
16 փետրվար 2024թ.հ. 84–Լ հրամանի սովորողների կողմից իրականացվող աշխատանքի ընդունման հանձնաժողովի

ՈՐՈՇՈՒՄ

Սովորող	դասարան	Գնահատական /ՄԳ/
Սոնա Մուրադյան	7«Դ»	20 միավոր՝ 10
Մանե Սաղաթելյան	7«Դ»	20 միավոր՝ 10
Մարիաննա Շմավոնյան	7«Դ»	20 միավոր՝ 10

Հանձնաժողովի նախագահ՝ Գ.Մելիք–Ստեփանյան
Անդամներ՝
Ուս.աշխ.գծով տնօրենի տեղակալ՝ Գ.Մաղաթյան
Ուսուցիչ՝ Ա.Պողոսյան

23.02.2024թ.